

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ԲՈՒՅՍԵՐԻ
ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ




Մարդկային քաղաքակրթության գոյության առաջնային պայմաններից մեկը դա կենսաբազմազանության առկայությունն է, որի միջոցով ապահովվում է կյանքի հարատևումը և սոցիալ-տնտեսական համակարգերի զարգացումը: Բնական էկոհամակարգերի շրջանակներում գոյություն ունեցող ներքին և արտաքին կապերի միջոցով կատարվում են նյութական, էներգետիկ և տեղեկատվական փոխանակումներ, որոնք ապահովում են էկոհամակարգերի արտադրողականությունը, հարմարվողականությունը և ճկունությունը: Եվ այդ փոխհարաբերությունների բազմազանության մեջ դժվար է գնահատել, թե



կենսաբազմազանության յուրաքանչյուր բաղադրիչ, որքան կարևոր է այդ համակարգերի գործունեության համար: Նաև անհրաժեշտ է բացահայտել այն հետևանքները, որոնք կարող են տեղի ունենալ տեսակների քանակության կրճատման կամ դրանց լրիվ անհետացման դեպքում, որը կապահովի էկոհամակարգի երկարատև գոյատևումը: Այդ առումով կենսաբազմազանության պահպանությունը չափազանց կարևոր է կյանքի ցանկացած ձևի, այդ թվում և մարդու, գոյատևման ապահովման համար: Նույնքան կարևոր է կենսաբազմազանության դերն էկոհամակարգերի կողմից տրամադրվող ծառայությունների ապահովման առումով՝ հողա-կլիմայական պայմանների կարգավորման, ջրի մաքրման, բնական աղետների հետևանքների մեղմացման և այլն:

Կենսաբազմազանության տիպերը

Գենետիկական բազմազանությունը ձևավորվում է պոպուլյացիաների տարբերումից և ներպոպուլյացիոն ձևափոխությունից: Նույն տեսակի առանձնյակների գեները տարբերվում են իրարից աննշան, ինչը կոչվում է էկոտիպ: Տարբեր էկոտիպի բույսեր կարող են ապրել նույն տարածքում, քանի որ բույսերի միգրացիայի հնարավորությունները սահմանափակ է: էկոտիպային տարանջատումը բարձրացնում է պոպուլյացիայի կայունությունը: Բույսերի էկոտիպերը կարող են տարբերվել ծաղկման ժամկետներով, չորադիմացկունության կայունությամբ: Անբարենպաստ պայմաններում, հատկապես մարդու ներգործության պարագայում, ներպոպուլյացիոն բազմազանությունը կարող է նվազել, որի արդյունքում մնում են ավելի դիմացկուն էկոտիպերը:



Տեսակային բազմազանությունը՝ դա տեսակների քանակն է որոշակի տարածքում կամ բիոտոպում: Այսօր նկարագրված է 1,5 միլիոն տեսակ: Մասնագետների գնահատմամբ Երկրի վրա ապրում են 5-100 միլիոն տեսակ:

Տեսակը համարվում է կենսաբազմազանության հաշվառման հիմնական միավորը, որը պետք է կարողանա ապահովել իր ինքնակենսագոյությունը, միջավայրի

փոփոխման դեպքում՝ արագ վերականգնվել: Այս սահմանումին չհամապատասխանող տեսակներն ոչնչանում են, իսկ պահպանվում են, մարդու կողմից պահպանման հատուկ միջոցառումներ իրականացման արդյունքում:

Տեսակի կենսաբանության և էկոլոգիայի մասին տեղեկություններն անհրաժեշտ են բնության մեջ և կուլտուրայում (in situ և ex situ) պահպանման համար:

Պահպանման օբյեկտներ հիմնականում հանդիսանում են տեսակները: Բնապահպանական միջոցառումները չպետք է հիմնվեն տաքսոնոմիական սկզբունքի վրա, քանի որ տեսակների տարածվածությունը կախված չէ ենթադրվող բարեկամությունից: Բույսերի, կենդանիների միկրոօրգանիզմների տարբեր տաքսոններ մեկը մյուսին լրացնելով՝ կազմում են կենսացենոզներ և բիոտներ: Ինչքան բիոտը հարուստ է, այդքան դրա տեսակների հավանականությունը քիչ է, որ հայտնվեն Կարմիր գրքում :

Էկոհամակարգ

Էկոհամակարգերի տարբերություններն որոշվում են կառուցվածքային միավորներով, մասշտաբներով:

Երկրի վրա կարելի է դիտել էկոհամակարգերի բազմություն՝ ցամաքային, ջրային, բնեռային սառցե անապատներ, կորալյան խութեր: Բոլոր էկոհամակարգերը կարելի է դասակարգել կամ ֆունկցիոնալ, կամ կառուցվածքային հատկանիշներով:

Էկոհամակարգային բազմազանությունը հաճախ գնահատվում է տեսակների բազմազանությամբ: Դա կարող է լինել տեսակների առատության մասին գնահատում, տարացքի կամ բիոտոպի բազմազանություն, տարբեր տրոֆիկական մակարդակների կենսազանգվածի՝ բիոմասսայի գնահատում:



Բոլոր կենսաբազմազանությունների տիպերը միմյանց հետ փոխկապակցված են:

Ապրելավայրերի մասնատումը

Բացի ապրելավայրերի լրիվ ոչնչացումից կենսաբազմազանության վրա ազդում է նաև ապրելավայրերի մասնատումը: Մասնատման գործոններն են՝ ճանապարհները, էլեկտրալարերը, արհեստական ջրանցքները, գյուղատնտեսական տարածքները, քաղաքները, հանքարդյունաբերությունը: Ամեն մասնատված մասունի կենտրոնական մաս՝ բարենպաստ պայմաններով և ծայրային էֆեկտի կամ էկտոնի գոտի: Օրինակ անտառի եզրին՝ ծայրային էկտոնում, չեն կարող աճել անտառին բնորոշ բույսեր. աճում են սպեցիֆիկ տեսակներ՝ դուրս մղելով բնիկներին:

Կենսաբազմազանության պահպանման մակարդակները
Իրականացվում է 2 ձևով.

1. պահպանման տեսակապույույացիային մակարդակ (տվյալ մակարդակում բացահայտվում են անհետացման վտանգի տակ գտնվող տեսակները և էկոհամակարգի օգտագործման ժամանակ այդ տեսակների վրա դրվում է օգտագործման արգելք),
2. պահպանման էկոհամակարգային մակարդակ (պահպանվում են ամբողջ էկոհամակարգեր, ստեղծվում են հատուկ պահպանվող տարածքներ):

Բույսերի հարմարվողականությունը Արարատի մարզում

Արարատյան դաշտը հնագույն ժամանակներից եղել է հայկական պետականության



ու մշակույթի օրրան:
Հայկական լեռնաշխարհի
ամենախիտ բնակեցված
շրջանն է. այստեղով են
անցել միջպետական,
տարանցիկ և առևտրական
ճանապարհները:

«...Հոյակապ, հոշակավոր,
երևելի գավառն
Արարատյան, ամեն ինչ

տվող է, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն
անհրաժեշտ օգուտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող՝ դաշտեր լայնատարած ու
որսալից, շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ արոտներով ծածկված,
կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրաց հետ էլի ուրիշ բազմատեսակ
կենդանիներով լեցուն: Լերանց բարձր կատարներից ջրեր են հոսում՝ լիովի
ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ
փարթամացած ոստանն են մատակարարում առատ հացով և գինով, անուշաբույր ու
մեղրահամ բանջարեղենով և յուղատու զանազան սերմերով: Իսկ թե հայացքդ
առաջին անգամ ես դարձնում դեպի լեռնափեշերը կամ սարահարթերը, ապա նրանց
վրա սփռվածը հանդերձներ կկարծես և ոչ թե ծաղկաբույս երանգներ՝ տարածված
փարթամորեն, անուշահամ ու պարարտ արոտներ...»:

Ղազար Փարպեցի V դար

Արարատի մարզ

Արարատը Հայաստանի մարզերից մեկն է: Մարզկենտրոնն Արտաշատ քաղաքն է: Տարածքը 2096 կմ² է: Արարատի մարզի հարավ-արևմտյան եզրին զուգահեռ 6-13 կմ լայնությամբ ընկած

է Արարատյան հարթավայրի

հարավ-արևելյան

մասը: Հյուսիսում Երանոսի

լեռնաշղթան է:

Հյուսիսային

սահմանն անցնում է

Ազատ և դրա վտակ

Գողթ գետերով:

Հյուսիս-արևելքում

Գեղամա



լեռնաշղթայի հարավ-արևմտյան հատվածն է: Արևելքում Մժկատարի լեռներն են, որից արևմուտք ընկած է Դահնակի լեռնաշղթան, սրանից էլ հարավ գտնվում է Ուրծի լեռնաշղթան: Մարզի կենտրոնում Երասխի լեռներն են, Կոտուց, Խոսրովասար լեռնագագաթները և այլ լեռնագանգվածներ:

Տարածքի ամենացածր կետը հարավում է՝ Արաքսի հունի մոտ՝ 801 մ: Ամենաբարձր կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555,7 մ: Տարածքի միայն մոտ 30%-ն է հարթավայրային:

Մարզի խոշոր գետերն են Արաքսը, Հրազդանը, Ազատը, Վեդին: Համեմատաբար փոքր գետերից են Արածոն, Չորասու հեղեղատարը, Ազատի ու Վեդիի վտակները՝ Քաջառուն (Դարբանդ), Խոսրովը, և այլն:

Կլիմա

Պայմանավորված Հայկական լեռնաշխարհի լեռնային մակերևույթով՝ այս ամբողջ տարածաշրջանում՝ այդ թվում Արարատի մարզում, կլիման ենթակա է վերընթաց գոտիականության: Մասնավորապես այս մարզում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը, որոնք հարթավայրային շրջաններից մինչև լեռնային շրջաններ իրար հաջորդում են հետևյալ հաջորդականությամբ.

չոր խիստ ցամաքային

չոր ցամաքային

չափավոր ցամաքային

բարեխառն

ցուրտ լեռնային

ձյունամերձ


Արարատի մարզում տարեկան միջին ջերմաստիճանը ցածրադիր և բարձր լեռնային շրջանների միջև տատանվում է



+10°C-ի և -2°C-ի միջև: Ձմռանն անհողմ եղանակային պայմաններում տեղի է ունենում ջերմաստիճանային շրջադասություն. սառն ու ծանր օդը կուտակվում է Արարատյան դաշտում: Այդ պատճառով միջին գոտում՝ մինչև 2000 մետր բարձրությունները, ձմեռը լինում է ավելի տաք և արևոտ, քան Արարատյան գոգավորությունում: Գարունն անցողիկ է և կարճատև: Մայիսի երկրորդ տասնօրյակից օդի ջերմաստիճանն անցնում է +15°C-ից, սկսվում է չոր, հաճախ խորշակներով երկարատև ամառը, որը շարունակվում է մինչև սեպտեմբերի երկրորդ կեսը: Աշունը մեղմ է, անհողմ, հաճախ են թույլ անձրևները: Մարզի հարթավայրային շրջանների համար բնորոշ են լեռնահովտային քամիները: Ամռանը՝ կեսօրից հետո, քամին Գեղամա լեռներից փչում է հովիտներ՝ մեղմացնելով ամառվա տապը: Հունվարյան միջին ջերմաստիճանն է այդ շրջաններում համապատասխանաբար -

6°C և -12°C, հուլիսյան ջերմաստիճանը՝ +26°C և +8°C, միջին տարեկան տեղումները՝ 200մմ և 1000մմ: Ցածրադիր շրջաններում դիտված բացարձակ առավելագույն և նվազագույն ջերմաստիճաններն են՝ -33°C և +42°C, ընդ որում վերջինս Հայկական լեռնաշխարհում դիտարկված բացարձակ առավելագույն ջերմաստիճանն է և այն գրանցվել է Արարատյան հարթավայրի հարավ-արևելքում: Ընդհանուր առմամբ Արարատի մարզն աչքի է ընկնում կլիմայի չորությամբ:

Արարատի մարզում տարածված են ՀՀ-ում առկա բոլոր 8 լանդշաֆտային գոտիները: Ցածրադիր շրջաններից մինչև բարձրադիր շրջաններ դրանք հաջորդում են իրար այս հերթականությամբ. անապատային, կիսաանապատային, չոր տափաստանային, տափաստանային, լեռնաանտառային, մերձալպյան, ալպյան, ձյունամերձ: Բայց սրանցից հիմնականներն են կիսաանապատային (Արարատյան հարթավայրում), չոր



տափաստանային (միջին բարձրության լեռներում), ալպյան (Գեղամա լեռնաշղթայի լանջերին): Այս ամենի հետ մեկտեղ հաշվի առնելով մարզում գործող կլիմայական պայմանները, պարզ է դառնում, որ բուսական աշխարհն այստեղ բավականին հարուստ է ու բազմազան: Արարատի մարզը Հայաստանի այն վայրերից մեկն է, որն ամենաշատն է ենթարկվում մարդածին ներգործությանը: Այստեղ բնական էկոհամակարգն ավելի

ինտեսիվ է մշակվում և յուրացվում մարդու կողմից: Սա հանրապետության առավել խիտ բնակեցված, արդյունաբերական և գյուղատնտեսական շրջանն է: Խորհրդային իրավակարգի ավելի քան 70 տարիների ընթացքում համատարած չորացվել և գյուղատնտեսական մշակաբույսի տակ իրացվել է ճահիճների շուրջ 20 հազար

հեկտար, հերկվել և իրացվել է տափաստանների շուրջ 80 հազար հեկտար: Ներկայումս, երբ մարդածին գործոնների ազդեցությունը բնական էկոհամակարգի համար ձեռք է բերել գլոբալ բնույթ, փոխվել է անապատային, կիսաանապատային, տափաստանային համակեցության բուսատեսակները՝ առաջ բերելով մոլախոտային ֆլորայի և բուսականության զարգացումը: Ճահիճների համատարած չորացումը բացասաբար է ներգործել առանձին բուսատեսակների և բուսական համակեցությունների վրա: Շատ արժեքավոր տեսակներ հայտնվել են բնաջնջման եզրին: Ներկայումս անհետացման եզրին է գտնվում Արարատ քաղաքի շուրջ 100հա տարածություն զբաղող կնյունի (*Juncus acutus*) համակեցությունը: Չպահպանելու դեպքում այն նույնպես կվերածվի մոլախոտային օջախի:

Անապատային գոտու հողերը

Զարգացած են միայն Արարատյան հարթավայրում:

Անապատային բուսականություն: Իսկական անապատ Հայաստանում հանդիպում է միայն 30000 հա: Դա բնորոշ է Արաքսի միջին հովտի աղակալված, ավազոտ, գիպսակիր և կավային հողերին: Գտնվում է ծովի մակերևույթից բարձր 800-900 մ բարձրության վրա:

Ավելի տարածված են հալոֆիլ և գիպսոֆիլ անապատները:

Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ 1.սոլերոս (*Salicornia europaea*), 2.կալիդիում (*Kalidium caspicum*), 3.աղահասկ (*Halostachys caspica*), 4.բոքակաբույս (*Nitraria schoberi*)



Սաքսազան (Halocnemum strobilaceum) Վտանգված տեսակ է: Հայաստանի Կարմիր



գրքի առաջին հրատարակության մեջ
ընդգրկված չէր: Ընդգրկված չէ CITES-ի և
Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:
Սուկուլենտ կիսաթուփ՝ 15-70սմ
բարձրության, հակադիր փոխված և
արմատակալվող ընձյուղներով: Միամյա
ընձյուղները՝ մոխրականաչ,
հատվածավոր, երիկամաձև: Հասկերը

կարճ-զևանաձև, նստադիր: Աճում է ստորին լեռնային գոտում, ծովի մակարդակից
850-900մ բարձրությունների վրա, ուժեղ աղակալված կամ խոնավ աղուտներում:
Ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:
Հաճախ առաջացնում է մաքուր խմբավորումներ:
Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ,
աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ ոռոգման,
հողերի աղազրկման և գյուղատնտեսական հանդակների
համար դրանց յուրացման հետևանքով:



Հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ
տեսակ՝ արարատյան որդան կարմիրի (Porphyrophora
hammelii) գոյությունը, որը զարգանում է հիմնականում
որդանախոտի (Aeluropus littoralis) արմատների վրա:

Գիպսոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող



լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպսոֆիլ անապատներին բնորոշ բույսեր
են՝ 1.սապնարմատ (Gypsophila) ցեղի ներկայացուցիչները, 2.հալանտիումը

(*Halanthium rarifolium*), 3.մոլոկան Թախթաջյանի (*Lactuca takhtadzhianii*), 4.զուգասերկ (*Zygophyllum atriplicoides*) և այլն:

Քասախ և Վեդի գետակների հովտում հանդիպում են փսամոֆիտ անապատային խմբեր, որոնք այստեղ ձևավորվում են ալուվիալ ավազների կամ պրոալուվիալ ժամանակավոր լեռնային հոսքերով:

Փսամոֆիտային անապատի տիպիկ մասսիվ գտնվում է Արարատի մարզի Գորովան գյուղի մոտ: Ավազոտ անապատների բուսականությունը ֆլորիստիկ տեսակետից բավականին հարուստ է: Առավել բնորոշ բույսեր են՝ 1.գեղաձևկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*), 2.հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), 3.եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (*Ceratocarpus arenarius*), 4.գեյդիցիա ծաղկավոր (*Seidlitzia florida*):



Այս փոքր և ինքնատիպ տարածքում աճող բույսերի մեծ մասը շատ հազվագյուտ է Հայաստանի համար:

Անապատների էկոհամակարգերում իր ուրույն տեղն ունեն նաև սնկերի որոշ տեսակներ, որոնք պատկանում են *Agaricum*, *Montagnea*, *Tulostoma*, *Disciseda* ցեղերին:

Կիսաանապատային բուսականություն

Կիսաանապատը, դա միջանկյալ բուսականության տիպ է, երբ անապատայինն ավելի բարդանում է և անցնում տափաստանի: Կիսաանապատը զբաղեցնում է Արարատյան հարթավայրի դելյուվիալ նախալեռները: Շատ տեղերում զարգանում են նաև այլուվիի վրա: Կիսաանապատները Հայաստանում տարածված են ծովի մակերևույթից 800-ից մինչև 1200մ բարձրության վրա, որոշ վայրերում՝ մինչև 1500մ:



Կիսաանապատներին ամենաբնորոշ բուսատեսակն է օշինդրը: Օշինդր բուրավետն (*Artemisia fragrans*), որպես կանոն բնորոշ է չաղակալված շատ կարբոնատային, քարքարոտ մակերեսով, գորշ հողերին: Եթե անապատներին բնորոշ է հողածածկույթի ոչ լրիվ ծածկումը, որը կապված է իսկական ճիմի բացակայության հետ, ապա այստեղ

դիտվում են միայն ճիմագոյացման սկզբնաշրջանները: Գարնանը կիսաանապատների տարածքը սովորաբար ծածկվում է էֆեմերներով (*Ceratocephala falcata*, *Anisantha tectorum* և ուրիշներ): Այստեղ աճում են մանր ցորենազգիներ էֆեմեր ճիմի տեսքով (դաշտավուկ, անապատահասկ, մորտուկ, ցորնուկ, ծնկախոտ): Բուսածածկույթը, չնայած միջավայրի քսերոֆիտ պայմաններին, տարբերվում է տեսակային կազմի բազմազանությամբ:

Օշինդրային անապատի հիմնական բաղադրիչն է՝ հոտավետ օշինդրը: Դա ցածրահասակ կիսաթուփ է մինչև 50սմ բարձրության՝ փայտացած հիմքով: Լրիվ բուսածածկույթ չի գոյանում: Գարնանը և աշնանը օշինդրի թփերի մեջ աճում են էֆեմեր բույսեր՝ եղջյուրագլխիկ, ջարդախոտ, գաղտրիկ, շնկոտեմ և այլն:



Օշինդրային կիսաանապատներում օշինդրից բացի ինքնուրույն խմբեր է կազմում փշոտ կապարը (*Capparis spinosa*): Կապարային կիսաանապատներն առանձին

խմբերով հանդիպում են քարքարոտ օշինդրային կիսաանապատների կավային լանջերին:

Արարատյան հարթավայրի նախալեռներում հոտավետ օշինդրը բարձրանում է ծովի մակերևույթից բարձր մինչև 1300-1500մ, զբաղեցնում է Արագածի և Գեղամա լեռների մակրոլանջերը:

Ֆրիգանոիդային բուսականության տիպը Հայաստանում ամենա քսերոֆիտն է: Դա բնորոշ է չոր սակավահող քարքարոտ Արաքս գետի նախալեռնային թեքություններին, 1500մ-ից բարձր շրջաններին (Զանգեզուր, Մեղրի, Դարալագյազ և այլն):

Օդի չորությունը, ժայռերի գերտաքացումը, ինտենսիվ գոլորշիացումը հանդիսանում են միջավայրի հիմնական գործոններ, որոնք նպաստում են հատուկ ընտելացած բույսերի աճմանը: Ֆրիգաններում իշխող բույսերն են՝ բարձիկանմանները, գազերը, կիսաթփերը և թփերը, կամ ցածր ծառերը (Ֆենցելի նշենին, վայրի տանձի նեղատերև ձևերը, Պալլասի դժնիկը, ալեհեր բալենին, հիմենոկրատերը և այլն): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ,

երիցուկ, իշակաթնուկ:

Այստեղ շատ են բարձիկային ձևերը, որոնք պատկանում են

Acantholimon, *Onobrychis*, *Astragalus* ցեղերին:

Ֆրիգաններում հանդիպում են ծայրահեղ քսերոֆիտ



կիսաթփեր, որոնց վերգետնյա օրգանները հաճախ ծածկված են շատ խիտ մոխրագույն, արծաթավուն կամ համարյա սպիտակ, բավականին երկար մազիկներով: Ֆրիգաններում հաճախ են հանդիպում բազմազան քսերոֆիտ բազմամյա բույսեր:

Ազոնալ բուսականություն

Հայաստանում ազոնալ բուսականությունը հիմնականում ներկայացված է ճահճային, ջրային և ժայռային բույսերով: Այդ բուսականության համակեցությունները բազմազան են, ունեն հարուստ ֆլորիստիկ կազմ և մեծ նշանակություն բուսականության հազվագյուտ տիպերի պահպանման համար:

Բրածո բույսեր

Ջերմանիսինը (ՀՀ Արարատի մարզի տարածքում, այժմ՝ ապաքնակեցված), որն ընդգրկում է մեզոգոյան դարաշրջանի պտերների և ասեղնատերևավորների մնացորդներ: Համարվում է ամենահին բրածո բույսը:

Գյուղատնտեսական մշակաբույսերն Արարատի մարզում

Արարատի մարզը համարվում է ՀՀ-ում տնտեսապես ամենազարգացած մարզերից, առավելապես կարևորվում է մարզի գյուղատնտեսական նշանակությունը: Ունենալով Արարատյան դաշտի մի մեծ հատված՝ այստեղ է մշակվում ՀՀ



գյուղատնտեսական մշակաբույսերի զգալի մասը: Մարզում զարգացած է երկրագործությունը: Հիմնական պտղատու այգիներն են խաղողի, ծիրանի, դեղձի





այգիները, մշակվում են նաև կեռաս, սալոր, խնձոր, տանձ և այլն: Մարզի հիմնական մշակաբույսերն են ձմերուկ, սեխ, լոլիկ, վարունգ, լոբի, սիսեռ, կանաչ պղպեղ, սմբուկ, ցորեն:



Երկրագործությունը 90 տոկոսով ոռոգովի է: Այդ նպատակով օգտագործվում է ինչպես գետերի ջրերը՝ իրենց ջրանցքներով, այնպես էլ արտեզյան հորերի ջրերը: Մարզում՝ մասնավորապես Արարատյան հարթավայրում դաշտավարական մշակաբույսերից են. հացահատիկ

Ցորեն: Ցորենի շատ տեսակների հայրենիքը Հայաստանն է: 1930-ական թվականներին Հայաստանում (Կարմիր բլուր) հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են ցորենի ածխացած հատիկներ, և պարզվել է, որ 2,5 հազար տարի առաջ այս տարածքում (Արարատյան դաշտում) մշակվել են միահատիկ ցորեն և ցորենի փափուկ (*Triticum aestivum*) տեսակներ: Ցորենի ածխացած հատիկներ են հայտնաբերվել նաև Արարատի, Արմավիրի, Տավուշի



մարզերում: Մ.Թումանյանը հայտնաբերել է (1930-ական թթ.) վայրի ցորենի միահատիկ, Ուրարտական, Արարատյան տեսակները և Վավիլոնի կամ Վանի ցորեն (*Triticum vavilovi*) ու կիսահաճարը (*Triticum spelta*), իսկ Բ.Գարասեֆերյանն ու Պ.Ղանդիլյանը Վայոց ձորի, Արարատի և այլ մարզերում՝ վայրի ցորենի բազմաթիվ տարատեսակներ: Ցորենի Վավիլոնի, Արարատյան, վայրի միահատիկ և Ուրարտու տեսակները գրանցված են ՀՀ Կարմիր գրքում: Էրեբունի և Խոսրովի անտառ արգելոցներում աճող պոպուլացիաները պահպանվում են պետության կողմից: Օգտագործվում է հացի, ձավարի, մակարոնի, հրուշակեղենի արտադրության մեջ: Ցորենից ստանում են նաև սպիրտ, օսլա, դեքստրին, սուսինձ և այլն: ՀՀ-ում շրջանացված են ցորենի աշնանացան՝ Բեզոստայա 1, Միրոնովսկայա 808, Կանգուն 20, Սպիտակահատ տեղական, Արմյանկա 60 և այլն, գարնանացան՝ Գալգալոս (Քոիկ), Նոր կունդիկ, Շիրակի 1 և այլ սորտեր: 1970թ-ին արտադրության մեջ ներդրվել է ցորենի և աշորայի խաչաձևումից ստացված նոր բույս՝ Տրիտիկալե (*Triticale*), որի աշնանացան սորտերը բարձր բերքատու են:



Գարի: (լատ.՝ *Hordéum vulgäre*), գարի ցեղի, հացազգիների ընտանիքին պատկանող խոտաբույսի տեսակ: Այն կարևոր գյուղատնտեսական մշակաբույս է, մարդկության պատմության ընթացքում ամենահին մշակաբույսերից մեկը (մշակաբույսն սկսել են մշակել 10 հազար տարի առաջ): Գարու սերմերը լայնորեն կիրառվում են արտադրական, տեխնիկական և սնման նպատակներով, այդ թվում նաև գարեջրագործության մեջ, վարսակի և գարու ձավարի արտադրության մեջ: Գարին արժեքավոր խտացված կեր է կենդանիների համար, քանի որ պարունակում է սպիտակուց, հարուստ է օսլայով:

Եգիպտացորեն: (*Zea mays*), մայժ, սիմինդր, խոշոր հատիկներով բույս է: Լայնորեն մշակվում է ամբողջ աշխարհում: Միամյա խոտաբույս է, եգիպտացորեն դասի միակ



մշակաբույսն է: Բաժանվում է ինը բուսաբանական խմբերի: Արարատի դաշտում մշակվում է հատիկաընդավոր (սիսեռ, ոսպ, լոբի, ոլոռ) բույսերը 700-2000 մ բարձրության գոտիներում: Իսկ եթերատուներից (կտավատ, խորդենի և արևածաղիկ):

Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ

Վերջին շրջանում արդյունաբերության զարգացման, աննախադեպ շինարարության ծավալման, ինչպես նաև բնական պաշարների ոչ խնայողական օգտագործման հետևանքով ՀՀ բուսաշխարհը մեծ կորուստներ է կրել: Դա չի սահմանափակվում միայն առանձին բուսատեսակներով, այլ զանգվածաբար ոչնչանում են գենոֆոնդի



բուսական համակեցություններ, ամբողջական ասոցիացիաներ, ֆորմացիաներ և բուսաբանական խմբավորումներ:

Ինչպես Հայաստանի այլ մարզերում, այնպես էլ Արարատի մարզում միջազգային համաձայնագրերի ու կոնվենցիաների շրջանակներում իրականացվում են միջոցառումներ մարդու առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով: Դրանցից են՝ հանքային ռեսուրսների արդյունավետ և շրջակա միջավայրի պահպանության ապահովումը, բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և վերարտադրության բարելավումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման, ինչպես նաև շրջակա

միջավայրի վրա կազմակերպությունների արտադրական գործունեության վնասակար ազդեցության կանխարգելման կամ նվազեցման խնդիրները, մասնավորապես՝ հողերի դեգրադացիայի, անապատացման կանխումը, անապատացմանը նպաստող գործոնների նվազեցումը, կանաչ տարածքների ավելացումը:

Արարտի մարզում բույսերի հարմարվողականության հիմնախնդիրներից է հողերի պահպանումը, որը խիստ արդիական է և պահանջում է նորարական մոտեցումներ: Տարիներ շարունակ արոտավայրերում հողատարածք տրամադրելու ժամանակ հաշվի չի առնվում անասունների արածեցման սահմանված նորմերը, մեծ թեքությամբ լանջերը և ժամկետները, որի հետևանքով չի կանխվում հողերի դեգրեդացիոն երևույթները, որը իր անմիջական ազդեցությունն է ունենում տարածքի կենսաբազմազանության վրա: Արոտավայրերի չարաշահումը մարզի տարածքում նպաստում է հողերի դեգրեդացիայի և կենսաբազմազանության կորստին: Այս խնդրի լուծման համար անհարաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝



- 1) վաղ գարնանն անասուններին լեռնային արոտներ չբարձրացնելը,
- 2) արածեցման նորմերի պահպանում,
- 3) հեղեղավտանգ, ջրածածկման ենթակա հողատարածքներում

շինարարական աշխատանքների կատարում,

4) արգելել ոռոգման սխալ կազմակերպումը, որի հետևանքով կկանխվի

հողերի դեգրեդացիոն երևույթները:

Շրջակա միջավայրին և ջրային ավազանին մեծ վնաս են հասցնում օրեցօր ավելացող ձկնաբուծական տնտեսությունները, եթե 2009 թվականին մարզում ձկնաբուծական տնտեսությունների թիվը 138 էր, այժմ դրանց թիվը հասել է 162-ի:

Բնաջնջման եզրին են կանգնած անապատային, կիսաանապատային, տափաստանային և ճահճային բուսականության տիպերը, որոնք ընդգրկում են Հայաստանի ֆլորայի շուրջ 25%-ը: Այս իրավիճակից դուրս գալու ելքը հանրապետության բուսատեսակներով հարուստ, առաջնային բուսական համակեցությունների ամենաբնորոշ նմուշային ոչ խոշոր հատվածները պետական պահպանության տակ առնելն է: Ստեղծված են արգելոցներ, արգելավայրեր և ազգային պարկեր, սակայն միայն այս ռազմավարությամբ հնարավոր չէ ապահովել գենոֆոնդի վերարտադրությունը:

<<Խոսքովի անտառ>> պետական արգելոց - տարածքը կազմում է 23095.5 հա, ֆլորան պարունակում է 1686 բուսատեսակ՝ Հայաստանի Հանրապետության բուսատեսակների մոտ 50%-ը: Այդ բուսատեսակներից 146 գրանցված են եղել նախկին ԽՍՀՄ-ի և

Հայաստանի

Հանրապետության

Կարմիր գրքերում:

Պահպանված են

մշակաբույսերի վայրի

ցեղակիցները,

պտղատուներից վայրի

տանձենին, խնձորենին,

սալորենին, բալենին, արոսենին, սզնին, նշենին հացազգիներից՝ <<Վավիլոնի>>

աշորան: Արգելոցում պահպանվում են գիհու և կաղնու նոսր անտառները, լեռնային



քսերոֆիտները, լեռնատափաստանային և օշինդրային կիսաանապատային ֆորմացիաները: Վերջիններս կարող են հետագայում հարուստ բազա դառնալ կլիմայի փոփոխության դեպքում նոր չորադիմացկուն սորտեր ստանալու համար:

Արարտի մարգում աճող էնդեմիկ բույսերից են՝

Թամաշյանի օջան: Վտանգված տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի



և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Միամյա, հիմքից ճյուղավորված բույս՝ բաց կանաչ, սպիտակավուն ակոսավոր ցողուններով: Տերևները թելանման-գծային, մերկ, փշոտ: Ծաղկապատի մասերը՝ 2,8-3,8մմ երկարության, նշտարաձև, գազաթում՝ սուր, պտղի ժամանակ՝ մեծ, բաց դարչնագույն, թաղանթային թևերով, պարզորոշ դուրս ցցված մուգ ջղերով: Սերմը 3մմ տրամագծով: Աճում է ստորին լեռնային գոտում, ծովի

մակարդակից 700-1000մ բարձրությունների վրա, անապատում և կիսաանապատում, ավազային հողերի վրա, երրորդական դարաշրջանի գիպսակիր կարմիր կավերի վրա: Ծաղկում է հուլիս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-նոյեմբերին: Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար ավազային հողերի յուրացման, ինչպես նաև որպես շինարարական նյութ ավազների դուրս հանելու հետևանքով: Պոպուլյացիայի մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

Արարատի իշամառուը: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայաստանի էնդեմիկ բույս: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա, որի տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում, հատկապես՝ գյուղատնտեսական գործունեության հետ կապված աճեւալայրերի պայմանների փոփոխության հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Բազմամյա բույս՝ 150-230սմ բարձրության: Կոճղարմատը՝ բազմազմբեթ: Յողունը՝ պարզ, մերկ, վերին մասում թավոտ: Ստորին ցողունային տերևները՝ մակույկանման, վերինները՝ գծային-նշտարաձև, մանր սպիտակ-ատամնավոր եզրերով: Ծաղկաբույլը՝ բազմաթիվ (40-50) ծաղիկներից կազմված զամբյուղներով: Աճում է ստորին լեռնային գոտում, ծովի մակարդակից 850մ բարձրությունների վրա, հանքայնացած և թեթևակի աղակալած և միայն կնյունի համակեցությամբ պատված ճահիճներում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս-սեպտեմբերին: Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճեւալայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ գյուղատնտեսական հանդակների համար հողերի յուրացման, ճահիճների չորացման, արածեցման, բուսականության այրման հետևանքով:



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):